Ապրել ու մեռնել միայն հայրենիքի համար…

«Հայրենաշունչ բանաստեղծ ես, ապրե՛ս: Շիրակից ուրիշ տեսակ երգիչ, իհարկե, չէր կարող ծագել»,-այսպես էր արձագանքել Պերճ Պռոշյանը «Երգեր ու վերքերը» ձեռքն առնելուն պես:

Ի վերուստ արդեն կանխորոշված էր բանաստեղծի ուղին. հայրենիքի անհուն սերն ու կարոտը պիտի դառնային նրա կյանքի ուղեկիցը. *«Ահավոր ուժեղ է հայրենիքի սերը… Մոր նման՝ միշտ սիրում ես, միշտ կարոտը թարմ է և միշտ անհագուրդ…»:*

1895 թվականի կեսերին, երկամյա բացակայությունից հետո Իսահակյանը վերադառնում է հայրենիք և անմիջապես հայտնվում ազգային-ազատագրական պայքարի հորձանուտում: Իսահակյանը զինվորագրվում է այդ «սուրբ գործին», որին ծառայելու երդում էր տվել ինքն իրեն. «*Ես վճռել եմ լինել ազգային-հեղափոխական….»*:

« Սուրբ է հայրենիքը: Նա մեր հացն է, նա՝ մայրական գիրկ: Մեր մանկությունն է նա, մեր պապերի գերեզմանը և մեր մանուկների օրորոցը: Նա մեր տարեգիրքն է և մեր հին ու նոր քնարը: Նա հայրական տան ծուխն է, որ մեր հրճվանքն ու վիշտը տանում է աստղերին: Նվիրական է նա, որովհետև մեզ գրկող բազուկներն ու սիրող սրտերը հող են դարձել այստեղ»:

« Քանի ողջ եմ, կկռվեմ հայրենիքիս հողի համար, նրա ազատության համար, երբ որ մեռնիմ, կուզեմ, որ գերեզմանիս հողի վրա շրջեն ազատ ազգակիցներս»:

Երիտասարդ բանաստեղծը սկսում է շրջել Հայաստանի տարբեր վայրերում՝ Կարս, Անի, Կաղզվան, իր համախոհների հետ կազմավորում է կամավորական ջոկատներ, հայթայթում դրամ, զենք և ուղարկում դրանք թուրքի դեմ կռվող հերոս ֆիդայիներին:

« Ամեն բան անցնում է իմ սրտի միջով՝ աշխարհը, բոլոր իրերը, հարցերը, դեպքերը. ես անտարբեր չեմ կարող կանգնել աշխարհի առջև, անարձագանք, անանդրադարձ»:

Հայրենիքի ազատագրման գաղափարով ապրող բանաստեղծին չկոտրեց անգամ բանտն ու աքսորը: Աքսորից վերադառնալուց հետո Իսահակյանը անդամագրվում է Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը, որի որդեգրած գաղափարներն առավել հոգեհարազատ էին իրեն: Իսահակյանը, սակայն, մեծ գաղափարների, իդեալի կրողն էր, իսկ այդ իդեալը ոչ այլ ինչ էր, քան հայ ժողովրդի, համայն մարդկության ազատագրումն ու անկախությունը, հանուն որոնց նա պատրաստ էր ամեն ինչի.

Քո հողին մեռնեմ, անգի՛ն հայրենիք,
Ա՜խ, քիչ է, թե որ մի կյանքով մեռնեմ.
Երնեկ ունենամ հազար ու մի կյանք,
Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ…

«Հայաստանը փոքր է, շատ փոքր, բայց երբ միացնենք նրա հետ մեր իդեալը, մեր տենչը, մեր երազը, մեր անցյալ շքեղ մշակույթի գանձերը, մեր պատմությունը, մեր անցյալը, մեր հոգեկան ժառանգությունը, ուրեմն Հայաստանում մենք կունենանք մեծ ազգ, կունենանք ամբողջ Հայաստանը և նրա ապագան կլինի իրապես մեծ, որովհետև երազը, տենչը, հոգին, իդեալը մարմին կառնեն, իրողություն կդառնան»:

Շնորհիվ Իսահակյանի ֆիդայական շարժումը մուտք գործեց պոեզիա, մեր պոեզիայի այդ դարավոր հայրենասիրական հունին նոր ավյուն ներարկեց,

իմաստավորեց ազգային անկախության պայքարը և դրանով իսկ նոր էջ բացեց հայ բանաստեղծության պատմության մեջ:

« Հայությունը աներևակայելի վտանգի մեջ է հիմա. Եթե անկորուստ դուրս պրծնի այս մահամերձ վիճակից, խոսք եմ տալիս ինձ՝ կյանքիս մեջ երբեք ախ չքաշել, չտխրել, չհուսահատվել, այլ ուրախ ու զվարթ, հարբած՝ոգևորված ապրել ու գործել…»

Ֆիդայական պայքարը, նրա ոգին, հույսն ու տառապանքը պիտի հավետ ապրեին Իսահակյանի երկերում, պիտի ստանային իրենց գեղարվեստական մարմնավորումը: Իսահակյանը դարձավ հայդուկյան շարժման երգիչը. նա այդ իրավունքը ձեռք էր բերել իր ճակատագրի փորձություններով, իր բանաստեղծական հանճարով և իր երգերի համաժողովրդական ճանաչումով: Իսահակյանը դարձավ ֆիդայական պայքարի առաջին երգիչը հայ պոեզիայի պատմության մեջ: Այս շարքն առավել թանկ ու անփոխարինելի էր, որովհետև այն ստեղծվել էր ճիշտ ժամանակին, պատկերն էր այն իրականության, որն այդ պահին բախում էր պատմության դուռը, դա անկախության պայքարի ոչ թե հետագա իմաստավորումն էր կամ նրա արձագանքը, այլ շարժման կենդանի արտացոլումը. այն ընթերցողին վարակում էր սուրբ մարտի առաքինությամբ և կռվի էր մղում…

« Հայրենասիրությունն այն է, որ հայերը ամենուր իրար պատկանեն և միասին՝ հայրենիքին»:

Առաջին հանրապետության ծնունդը նոր հույս արթնացրեց բանաստեղծի հոգում. գալու էր նո՛ր, լուսավոր Հայաստանի ժամանակաշրջանը:

« Դու՛, հայ պաշտելի ժողովուրդ, դասական, ազնիվ ժողովուրդ, դու ադամանդ, ադամանդի պես ամուր: Դու պիտի լինես ընկերների երկիր, աշխատանքի, գաղափարի, մտքի երկիր»:

1919-1921 թթ. Իսահակյանը գործուն մասնակցություն է ունեցել Դաշնակցության Նեմեսիս գործողության նախապատրաստման և կազմակերպման աշխատանքներին: 1921 թ. մարտի 15-ին, Հարդենբուրգ փողոցի մյուս կողմում կանգնած էր Իսահակյանը, որը պատրաստ սպասում էր, որ եթե հանկարծ Թեհլերյանը չկարողանա սպանել Թալեաթին, նա էր սպանելու: Իսահակյանը նաև մեծ դեր ունեցավ Թեհլերյանի

արդարացման գործում: Հետևաբար Ավետիք Իսահակյանը Թալեաթի սպանության կազմակերպիչներից էր և գտնվում էր իրադարձությունների կիզակետում:

Հայրենի հողը, Հայրենի բնությունը, Արարատը, Արագածը, Սևանը, էջմիածինը հոգեկան վիթխարի ուժ էին ներշնչում աշխարհի բազում ճամփաներ անցած, սակայն այդպես էլ անդորր ու երջանկություն չգտած բանաստեղծին: Այլ էր հայրենիքը, հայրենի շունչն ու ոգին, հայրենի լեռներն ու աղբյուրները…

Պիտի փարվիմ չքնաղ լանջիդ՝
Գարնան վարդով ցնծու՛ն,
Եվ մայրական անհուն շնչիդ՝
Ցորեն արտով ծփու՛ն:

Կանչում ես ինձ լուսաբարբառ
Քո սիրագեկդ կոչով,
Դեմքդ եմ տեսնում՝ նոր ու պայծառ,
Քո հնագեղ ոճով:

Վա՛ռ ու հզո՛ր քո ապագան
Կայծակում է իմ դեմ.
Դու՛, հավերժո՛ղ իմ Հայաստան,
Անուն քա՛ղցր ու վսե՛մ:

Ճակատագիրն Իսահակյան բանաստեղծին բազում թելերով կապել էր հայրենի եզերքին: Պանդխտության մեջ գտնվող բանաստեղծը, դեգերելով օտար, ամայի ճանապարհներին, անհուն սիրով և քնքշանքով է հիշում հայրենիքը, երբեմն մտքով թռչում է դեպի հայրենի եզերքը, հայրական տունը…

« Հայրենիքի սերը հնության, հայրերի, ավանդությունների պաշտամունքն է….»

1930-1936 թթ. ընթացքում Իսահակյանն ապրել է Ֆրանսիայում, եղել է ՀՕԿ-ի փոխնախագահը: Ստեղծագործական առումով բեղմնավոր տարիներ չէին, սակայն հայրենիքի շնչով ապրող բանաստեղծը լծված էր շատ ավելի կարևոր մի գործի՝ կազմակերպել դեպի հայրենիք առաջին ներգաղթը:

Անսահման մեծ էր Իսահակյան մարդու, բանաստեղծի հավատն ապագայի նկատմաբ. *« Թո՛ղ նոր սերունդները գան, որոնց հոգին պղտորված չէ սարսափով և վշտով, ուրախանան և պայծառ սրտով երգեն հայության ազատությունը»:*

Շուշան Հովակիմյան

Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի

ավագ գիտաշխատող

1. Երկերի ժողովածու, հատ. 1. Բանաստեղծություններ, Երևան, 1973:
2. Հիշատակարան, Երևան, 1977:
3. Աբաջյան Գ., Ավետիք Իսահակյանը և հայոց ողբերգությունը, Երևան, 2001: